

ՎԱՋԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Եվրոպական կրթական տարածաշրջանային
ակադեմիայի հանրային իրավունքի ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԲՆՈՒՅԹԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՏԵՔՍՏՈՒՄ

Սույն գիտական հոդվածը նվիրված է աշխարհիկ պետության սահմանադրաիրավական հիմնախնդիրների հետազոտմանը: Առանց աշխարհիկ պետության սկզբունքի իրագործման անհնար է կառուցել լիարժեք ժողովրդավարական և իրավական պետություն: Այդ իմաստով Հայաստանի Հանրապետության զարգացման և առաջընթացի գործում սահմանադրական կարգի սկզբունքներից մեկը համարվող աշխարհիկ պետության սկզբունքին տրվում է առանցքային դերակատարություն:

Հիմնարար: աշխարհիկ պետություն, սահմանադրական կարգ, գաղափարախոսական բազմակարծություն:

Աշխարհիկ պետության հայեցակարգը հասարակության պատմության կարևոր ձեռքբերումներից է: Այն որպես քաղաքակրթական արժեք՝ իր ուրույն տեղն ունի Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի սկզբունքների համակարգում, և փոխկապակցված է այդ համակարգի մյուս տարրերի հետ:

Աշխարհիկ պետության սկզբունքի սեփական տեսակետի ձևավորման և ձևակերպման, նրա տեղը սահմանադրական կարգի սկզբունքների համակարգում որոշելու համար, նախ և առաջ անհրաժեշտ է սահմանել այնպիսի հիմնարար հասկացություն, ինչպիսին է սահմանադրական կարգը: Կիսում ենք ակադեմիկոս Օ.Ե. Կուտաֆիևի տեսակետը, որը սահմանադրական կարգ հասկացությունը բացատրում է որպես «պետության կազմակերպման որոշակի ձև, որոշակի տեսակ, որն ամրագրված է նրա սահմանադրությունում» [2, էջ.121]: Միաժամանակ Օ.Ե. Կուտաֆիևը ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ «պետության մեջ սահմանադրության առկայությունը դեռևս թույլ չի տալիս տվյալ պետությունը համարել սահմանադրական» [2, էջ.55]: Մեր կարծիքով, սահմանադրական կարգը բնորոշ է միայն ժողովրդավարական պետություններին, որտեղ մշակված է սահմանադրաիրավական հստակ նորմերի համակարգ, առկա է հասարակության իրավագիտակցության բարձր մակարդակ, որը նպաստում է հասկանալու սահմանադրության դերն ու տեղը անհատի, հասարակության և պետության կյանքում:

Մ.Վ. Բագվալը «սահմանադրական կարգ» սահմանման տակ հասկանում է «կարգ, որի ժամանակ պահպանվում են մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իսկ պետությունը գործում է սահմանադրությանը համապատասխան» [3, էջ. 99]: Տվյալ հասկացության մեջ ընդգծ-

վում է, որ սահմանադրական կարգը գոյություն ունի միայն իրավական պետության մեջ, որտեղ հարգվում, պահպանվում և երաշխավորվում են մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իսկ սահմանադրությունը հանդիսանում է ոչ միայն իրավական, այլև պետության կառուցման և գոյության բարոյական հիմքը:

Աշխարհիկ պետությունը՝ հանդիսանալով Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի սկզբունք, չի կրում լայն համապարփակ բնույթ, ինչպես օրինակ, սահմանադրական կարգի մյուս սկզբունքը՝ ժողովրդավարական պետությունը: Պետության աշխարհիկությունը որոշում է պետության և կրոնական կազմավորումների փոխհարաբերությունների հիմքերն ու սահմանները, հանդիսանալով պետություն-կրոն հարաբերությունների գործընթացում՝ որպես ուղեցույց: Այստեղ սկզբունքային կարևորություն ունի նաև իշխանությունների տարանջատման սկզբունքը: Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը բաժանված է օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերի, որոնք առկա զսպումների և հակակշիռների մեխանիզմի օգնությամբ պետք է ապահովեն կամայականության և չարաշահումների բացառումը որևէ իշխանության ճյուղի կողմից: Իշխանությունների տարանջատման համակարգը նպաստում է տարբեր կրոնական կազմակերպությունների իրավահավասարության ապահովման խթանմանը: Այն պետությունում, որտեղ ոչ միայն հռչակվում, այլ նաև դե ֆակտո պահպանվում է իշխանությունների տարանջատման սկզբունքը, կրոնական դոգմաները և կարգադրագրերը չեն կարող փոխարինել նորմատիվ իրավական ակտերին, կրոնական կազմակերպությունները չեն կարող փոխարինել պետական իշխանության մարմիններին: Սահմանադրությունում առկա սահմանադրական կարգի բոլոր սկզբունքները միմյանց հետ գտնվում են

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

համակարգային սերտ փոխկապակցվածության մեջ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի. «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է» [1]: «Բարձրագույն արժեք» հասկացությունը վերաբերում է մարդուն, նրա արժանապատվությանը, հիմնական իրավունքներին և ազատություններին, ինչը նշանակում է անհատի գերակայություն, այլ ոչ թե պետության: Այսպես Սահմանադրությունը ամրագրում է ժամանակակից աշխարհի համամարդկային սկզբունքը, այն է՝ մարդը իր արժանապատվությամբ, իրավունքներով, ազատություններով և դրանց անշեղ իրացմամբ, հանդիսանում է ժողովրդավարական պետության բարձրագույն նպատակը: Պետական իշխանության բոլոր գործողությունները պետք է ուղղված լինեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանմանը և իրագործմանը:

Մարդուն՝ որպես բարձրագույն արժեքի սահմանադրական ճանաչմամբ, ՀՀ-ն ճանաչեց ժողովրդավարական հասարակարգի միջազգային պահանջները, հանձնիս այնպիսի համաճանաչ միջազգային իրավունքի ակտերի, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը:

ՀՀ Սահմանադրության մեջ մարդուն որպես բարձրագույն արժեքի, նրա հիմնական իրավունքների և ազատությունների ճանաչումը ձևավորված է որպես նորմ-սկզբունք և նորմ-նպատակ: Ներկայումս ՀՀ Սահմանադրությունը հավասարապես պաշտպանում և երաշխավորում է և՛ հավատացյալների, և՛ աթեիստների իրավունքները՝ հռչակելով պետության աշխարհիկության սկզբունքը, տրամադրելով յուրաքանչյուրին խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը որպես ժողովրդավարական հասարակարգի անկյունաքար, կանխորոշում է մարդու կրոնահավատամքային և կրոնամեթ գաղափարների ընտրության հնարավորությունը՝ դառնալով անհատի ինքնաճանաչման, ինքնադրսևորման, նրա ինքնության հաստատման անքակտելի տարրը: Այս իմաստով աշխարհիկ պետությունը երաշխավորում է գաղափարական ազատություն, որտեղ մարդը չի կարող ենթարկվել որևէ հետապնդման սեփական կրոնական պատկերացումների և համոզումների պատճառով:

Հարկ է հստակեցնել, որ պետության կողմից մեկ որոշակի կրոնական դավանանքի դերի ընդգծումը և նրա հետ սերտ գործընկերային փոխհարաբերությունների ձևավորումը չպետք է գնահա-

տել որպես օրենքի առջև կրոնական կազմակերպությունների իրավահավասարության սկզբունքի աղավաղում, կամ՝ նահանջ պետությունից կրոնական կազմակերպությունների բաժանման սկզբունքից: Այս իմաստով Հայաստանի Հանրապետությունը առանձնահատուկ հարաբերություններ է ստեղծել հայ ժողովրդի հոգևոր կյանքում իր նշանակալի ավանդը ներդրած Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև միաժամանակ սահմանադրաիրավական հստակ երաշխիքներ է ապահովել մյուս բոլոր կրոնական կազմակերպությունների ազատ գործունեության համար՝ հարգելով յուրաքանչյուր անհատի խղճի և կրոնի ազատության իրավունքը:

Աշխարհիկ պետությունը, որպես սահմանադրական կարգի սկզբունք, լրացնում է գաղափարախոսական բազմակարծությունը: Վերջինս իր իրավական ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածում: Հոդվածի 1-ին մասում մասնավորապես նշվում է. «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը»:[1]

Կարծում ենք անհրաժեշտ է աշխարհիկ պետության և գաղափարախոսական բազմակարծության սկզբունքների փոխազդեցության փաստարկման համար բերել հետևյալ բնութագրերը.

1. Հասարակության մեջ տարբեր կրոնական հայացքների բնականոն և խաղաղ գոյատևման հնարավորություն: Յուրաքանչյուրը իրավասու է (միայնակ կամ այոց հետ) ազատորեն ստեղծել, տարածել, պաշտպանել իր կրոնական հայացքները:

2. Որևէ կրոնի պարտադիր սահմանելու անհնարինությունը՝ որպես գաղափարախոսական բազմազանության սկզբունքի անհրաժեշտ երաշխիք:

3. Հասարակական կազմակերպությունների գործունեության ազատություն:

4. Կրոնական ատելություն և թշնամանք առաջացնող քարոզչության անթույլատրելիություն:

Աշխարհիկ պետության սկզբունքի փոխկապակցվածությունը իրավական պետության սկզբունքի հետ բավական ակնհայտ է: Իրավական պետությունը պետություն է, որտեղ ամրագրված է իրավունքի գերակայության սկզբունքի իրագործման կառուցակարգը: Որպեսզի պետությունը լինի իրավական, բավարար չէ միայն սահմանել իրավական օրենքներ, պետք է նաև ձևավորել հասարակության անդամների իրավագիտակցության մակարդակ, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի կհասկանա օրենքների կենսագործման կարևորությունը: ՀՀ Սահմանադրության մեջ ճանաչված աշխարհիկ պետության սկզբունքը կարող է իրացվել, միս ու արյուն ստանալ միայն իրավական պետու-

թյունում: Կրոնական կազմակերպությունը ստեղծվում, գործում և լուծարվում է միայն օրենքին համապատասխան: Պրոֆեսոր Ս.Ա.Ավագյանի կարծիքով, կրոնական կազմակերպությունների պետությունից առանձնացվածությունը և օրենքի առջև հավասարությունը ձեռնադրում է ոչ միայն պետությանը, այլև հենց իրենց՝ կրոնական կազմակերպություններին: Նման իրողության պայմաններում է արտահայտվում և ապահովում նրանց իրավաբանորեն հավասար դիրքը հասարակության և պետության մեջ [4, էջ. 7]:

Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է: Ինքնիշխանությունը արտահայտվում է պետական իշխանության գերակայության, անկախության և ինքնուրույնության մեջ: Բայց, միևնույն ժամանակ, պետական իշխանությունը պարտավոր է իր գործունեությունը իրականացնել՝ ղեկավարվելով օրենսդրությամբ: Այս իմաստով կրոնական կազմակերպությունները անխուսափելիորեն պետք է ենթարկվեն ՀՀ օրենսդրությանը: Երբ Հայաստանի Հանրապետությունում բացվում են տարբեր օտարերկրյա կրոնական կազմակերպությունների ներկայացուցչություններ, նրանք պետք է ենթարկվեն ոչ թե օտար պետության, այլ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգին: Հակառակ դեպքում կխախտվի Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան պետություն լինելու կարևորագույն սկզբունքը: Հիմնվելով վերը նշվածի վրա՝ աշխարհիկ պետության սկզբունքի հարաբերակցության տեսանկյունից մենք առանձնացնում ենք արտաքին ինքնիշխանություն (անկախություն օտարերկրյա կրոնական կազմակերպություններից) և ներքին ինքնիշխանություն (անկախություն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կրոնական կազմակերպություններից):

Մեր կարծիքով, պետք է առանձնացնել պետական ինքնիշխանության և աշխարհիկ պետության սկզբունքի փոխկապվածության հետևյալ հիմնական հատկանիշները՝

- որոշումների ընդունման գործընթացում անկախություն կրոնական կազմակերպություններից,
- պետական լիազորությունների անօտարելիություն՝ հօգուտ կրոնական կազմակերպությունների:

Հասարակության համար աշխարհիկ պետության սկզբունքը նշանակալի կապ ունի սոցիալական պետության սկզբունքի հետ:

Սոցիալական պետության ձևավորումը Հայաստանի Հանրապետությունում բավականին սերտ կապված է կրոնական կազմակերպությունների բարեգործական գործունեության հետ: Անկախության նվաճումից ի վեր ներպետական օրենսդրության մեջ տեղ են գտել այնպիսի իրավական ակտեր, ինչպիսին են «Բարեգործության մա-

սին», «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին», «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքերը: Կրոնական կազմակերպությունները, զբաղվելով բարեգործությամբ, իրագործելով տարբեր սոցիալական նախագծեր, օգնելով հասարակության կարիքավոր անդամներին, զարգացնում և ամրապնդում են սոցիալական պետությունը, որոշակի դեր խաղալով սոցիալական անհավասարության զսպման մեջ:

Ներկայումս դժվար է մաքուր իմաստով ապահովել պետության աշխարհիկ սկզբունքի կենսագործումը Հայաստանի Հանրապետությունում: Պետություն-կրոն հարաբերակցության մեջ մենք պարտավոր ենք հաշվի նստել դարեր ի վեր հավատի հանդեպ ունեցած հայ ժողովրդի առանձնահատուկ վերաբերմունքի և ազգային հավատամքային խառնվածքի ուրույն հատկանիշների հետ, որի ձևավորման և հարստացման մեջ անգնահատելի դեր ունի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Դա է պատճառը, որ մեր Սահմանադրությունը Հայաստանի Հանրապետությունը հռչակելով որպես աշխարհիկ պետություն՝ բարձր է գնահատում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը հայ ժողովրդի հարատևման կենսապայքարում, պետության զարգացման ամրապնդման գործում, այսպիսով նրա հետ կառուցելով հարաբերությունների այլընտրանքային ձևաչափ: Հայաստանի Հանրապետությունը մյուս կողմից երաշխավորում է կրոնական կազմակերպությունների ազատ գործունեության իրավունքը՝ մտքի խղճի և կրոնի ազատության իրավունքի հենքի տակ: Մեծագույն հարգանք դրսևորելով միջազգային իրավունքի հիմնարար նորմերի նկատմամբ, պետք է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունը որպես ինքնիշխան պետություն՝ առաջնորդվելով վերոհիշյալ նորմ-գաղափարներով, չպետք է կուրորեն կրի վերազգային կազմակերպությունների երբեմն չարդարացված պարտադրանքները, այլ դրանք անցկացնի սեփական ազգային նկարագրից և արժեքներից բխող առանձնահատկությունների ֆիլտրով, միջազգային հանրության հետ ներդաշնակեցնելով իր ազգային խնդիրներն ու պահանջումները: Այս իմաստով աշխարհիկ պետության հայեցակարգի ներդրումը որպես կարևորագույն համամարդկային արժեք, պետք է ներդաշնակորեն համաձայնեցվի տեղական արժեհամակարգի, անցյալի փորձի և ապագա տեսլականի հետ՝ առ հզոր, ժողովրդավարական ու բարեկեցիկ Հայաստանի կառուցման:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱԳԲՅՈՒՐՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 06.12.2015թ. փոփոխություն, ՀՀՊՏ 2015.12.21 /հասունկրողարկում, Հոդ.1118.
2. Козлова Е.И., Кутафин О.Е., Конституционное право России, учебник для студентов ВУЗ 3 изд М 2003, С. 585.
3. Баглай М В., Конституционное право РФ: Учебник для юридических вузов / 2 изд. М 1999, С. 776.
4. Авакьян С А., Свобода вероисповедания как конституционно-правовой институт Вестник Московского ун, 1999, С. 3-22.

Vahe Torosyan

Аспирант общественного права
Европейской региональной образовательной академии

РЕЗЮМЕ

*Светский характер Республики Армения в контексте
новых конституционных регулирований*

Настоящая научная статья посвящена исследованию конституционно-правовых проблем светского государства. Без реализации принципа светского государства невозможно выстроить ни полноценного демократического государства, ни правового государства. В этом смысле принципу светского государства как одной из основ конституционного строя отводится фундаментальная роль в развитии и прогрессе Республики Армения.

Ключевые слова: светское государство, конституционный строй, идеологическое многообразие.

Vahe Torosyan

Postgraduate student of public law of
European Regional Educational Academy

SUMMARY

*The secular nature of the Republic of Armenia in the context
of the new constitutional regulations*

This scientific article is devoted to the study of the constitutional and legal problems of a secular state. Without realizing the principle of a secular state, it is impossible to build either a full-fledged democratic state or a law-bound state. In this sense, the principle of the secular state as one of the foundations of the constitutional system has a fundamental role in the development and progress of the Republic of Armenia.

Keywords. secular state, constitutional system, ideological pluralism.